


Սյունյաց Երկիր

ՀԻՆՉԱԲԹԻ, 3 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2019Թ.
№ 20 (510)

www.syuniacyerkir.am

*Խելահեղ աչքերով, բոբիկ,
մորուքը հողմով ցիրուցան՝
Ջգեցած սեւասեւ զգեստը,
բզկտված փշերով հազար
Անցնում ես հերկերով այն ամա,
դարերով այնքան ծանոթ
Եվ - մաքուր ցորյանի նման -
ցրում ես հնչյուններ հայրենի...*

ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑ



Սեպտեմբերի 26-ին լրացավ հայոց ձայնապեղծայների արքա-ձայնագիր-խաչակիր-դպիր-վարդապետ

Կոմիտասի 150-ամյակը

**Ո՛վ նաիրյան հանճարի
Հազարամյա դու սերմնացան...**

Կասեցվել է ցեմենտի գործարանի կառուցումը

«Արարացեմենտ» ՓԲԸ-ն Կապան համայնքում նախատեսում էր կառուցել ցեմենտի աղացման արտադրամաս: Օրենքով նախատեսված ընթացակարգով համայնքում պետք է կազմակերպվեին հանրային լսումներ, որոնց կայացումը սակայն շուրջ 2 տարի խոչընդոտվում էր տեղի հասարակական կազմակերպությունների և բնակիչների կողմից:

«Մուլտի Գրուպ» կոնցեռնի տնօրենների խորհուրդը, հաշվի առնելով «Մուլտի Գրուպ» կոնցեռնի սեփականատեր Գագիկ Ծառուկյանի կողմից մշտապես հնչեցված այն տեսակետը, որ ցանկացած հարցում պետք է ակնաջալուր լինել ժողովրդի ցանկությանը, որոշում է կայացրել կասեցնել Կապան համայնքում ցեմենտի արտադրամասի կառուցման գործընթացները:

«ՍՈՒԼՏԻ ԳՐՈՒՊ» ԿՈՆՑԵՐՆԻ ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ



Նիկոլ Փաշինյանը Սյունիքում ծանոթացել է զորավարժությունների ընթացքին

Հայաստանի Հանրապետությունում սեպտեմբերի 24-ից հոկտեմբերի 5-ն անցկացված ռազմավարական զորավարժությունների շրջանակում վարչապետ Նիկոլ Փաշինյանը Պաշտպանության նախարար Դավիթ Տոնոյանի, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար Սուրեն Պապիկյանի, Զինված ուժերի գլխավոր շտաբի պետ Արտակ Դավթյանի, Սյունիքի մարզպետ Հունան Պողոսյանի ուղեկցությամբ այցելել է պահեստագործի զորավարժարան, որտեղ անցկացվում են մարտական պատրաստականության զորավարժություններ:



Ինչպես «Արմենպրես»-ին տեղեկացրին ՀՀ վարչապետի աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչությունից, վարչապետը շրջել է զորավարժարանի վրանային ավանում, ծանոթացել պահեստագործի համար ստեղծված կենցաղային, սննդի պայմաններին: Նիկոլ Փաշինյանը հետեւել է պահեստագործի պարապմունքներին, դիտել մարտական պատրաստվածությունը եւ զինտեխնիկայով հագեցվածությունը ներկայացնող զենքի կիրառության դրվագներ:

Դիմելով զորավարժությունների մասնակիցներին՝ վարչապետը նշել է.

«Ձորավարժությունների հարգելի մասնակիցներ,

Պաշտպանության մեծարգո նախարար, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների մեծարգո նախարար, Զինված ուժերի գլխավոր շտաբի մեծարգո

պետ, հարգելի սպաներ, սիրելի զինվորներ,

Այս օրերին Հայաստանի Հանրապետությունում տեղի են ունենում մեր հանրապետության պատմության համար աննախադեպ մասշտաբի զորավարժություններ: Ինչ գործնական նպատակ ունեն այս զորավարժությունները եւ ինչի համար են անցկացվում: Դրանց գործնական նպատակը գնահատելն է ոչ միայն մեր Զինված ուժերի, այլև ընդհանրապես, մեր հանրության մարտունակության աստիճանը: Արդեն 4 օր զորավարժությունները տեղի են ունենում եւ կարող ենք արձանագրել,

որ դրանց արդյունքներն ավելի քան գոհացուցիչ են: Ընդամենը 24 ժամվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում ձեռավորվել է գործող բանակին համարժեք եւս մեկ բանակ, այսինքն մեր Զինված ուժերի թվաքանակը կրկնապատկվել է: Եվ դա տեղի է ունեցել այն բանի շնորհիվ, որ դուք՝ Հայաստանի Հանրապետության պահեստագործում գրանցված քաղաքացիները, շատ արագ, պատրաստակամորեն եւ վճռական արձագանքել եք

Հանքարդյունաբերությունն ուշադրության կենտրոնում. ԱԺ-ում իրավունքի ուժով ստեղծվել է քննիչ հանձնաժողով

Ազգային ժողովում իրավունքի ուժով ստեղծվել է եւս մեկ քննիչ հանձնաժողով: Այս մասին ֆեյսբուքյան իր էջում գրել է ԱԺ նախագահ Արարատ Միրզոյանը:

«Այն կուսամենասիրի մետաղական հանքարդյունաբերության ոլորտում ներդրումային ծրագրերի շրջանակներում գործադիր իշխանության մարմիններին ներկայացված եւ նրանց կողմից ընդունված ֆինանսական եւ այլ հաշվետվությունների օրինականությունը, հիմնավորվածությունը եւ արժանահավատությունը», - ասված է գրառման մեջ:

Մեղրին կգազիֆիկացվի

Մեղրի խոշորացված համայնքում մեկնարկել են գազիֆիկացման աշխատանքները: Ի տարբերություն Հայաստանի գրեթե բոլոր համայնքների՝ Մեղրին անգամ խորի՝ դային տարիներին գազ չի ունեցել:

Ազգային ժողովի Տարածաշրջանային և եվրասիական ինտեգրման հարցերի մշտական հանձնաժողովի արտագնա նիստի ընթացքում Մեղրիի բնակիչները խնդրել էին պատգամավորներին հարցին լուծում գտնել:

Դրանից մի քանի օր անց հանձնաժողովի նախագահ Միքայել Մելքումյանը հարցն ուղղել է վարչապետին:

Գազիֆիկացման աշխատանքները վարչապետի հանձնարարությամբ մեկնարկել են ինչ հաջորդ օրը:

Վլադիմիր Աբունց. «Մաքսավորների արհեստավարժության շնորհիվ կարողանում ենք հաղթահարել դժվարությունները»

Զրույց հարավային մաքսատուն-վարչության Մեղրիի մաքսային կետ-բաժնի պետ Վլադիմիր Աբունցի հետ

Մարոն Աբունց, մտանք մաքսակետի տարածք, մտովի վերադարձա 2018 թ. հուլիսի 5-ը, երբ հանրապետության վարչապետն այստեղ էր ելույթ ունենում իր անցկացնում այդ ժամանակվա եւ այս վիճակի մեջ, եւ այսօր բավականին լավ վիճակ տեսանք մաքսակետի տարածքում այն օրերի համեմատ: Բավականին լուրջ բարեփոխումներ են կատարվել այստեղ: Զիջտ է մեր դիտարկումը:



Վլադիմիր Աբունց, ծնվել է 1975 թվականին Գորիս քաղաքում: Ավարտել է Գորիսի թիվ 5 միջնակարգ դպրոցը: 1993-1994 թվականներին ծառայել է ԶՅ զինված ուժերում: Դայ-ադրբեջանական հակամարտության ժամանակ մասնակցել է մարտական գործողությունների: ԳՅ պաշտպանության նախարարի կողմից արժանացել է խրախուսանքների: Ավարտել է Գորիսի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետը եւ Գորիսի «Սյունիք» ինստիտուտի իրավաբանության ֆակուլտետը: 1998 թվականից մաքսային ոլորտում է: Սյունիքի տարածաշրջանային մաքսատանը եղել է բեռների գնման մաքսային տեսուչ, այնուհետեւ՝ ավագ տեսուչ, գլխավոր տեսուչ, մաքսատան բաժնի պետ: 2019 թվականի մարտի 8-ից նշանակվել է հարավային մաքսատուն-վարչության Մեղրիի մաքսային կետ-բաժնի պետ:

- Զեր դիտարկումը շատ ճիշտ է, հանրապետության վարչապետի Մեղրիի մաքսակետ այցից առաջ կային բացթողումներ, թերացումներ: Հիմա դրանք բոլորը շտկվել են: Դրանք գտնվում էին ԶՅ պետական եկամուտների կոմիտեի նախագահ Դավիթ Անանյանի, նրա տեղակալ Շուշանիկ Ներսիսյանի, ով մաքսային ոլորտն է համակարգում, հարավային մաքսատուն-վարչության պետ Արա Ավետիսյանի ու շաղրության կենտրոնում: Վերջին մեկ տարվա փոփոխություններն ակնհայտ են, եւ տարածքի մաքրության, եւ սպասարկման կուլտուրայի հետ կապված, սա կարող են վկայել նրանք, ովքեր օգտվում են Մեղրիի մաքսակետի ծառայություններից եւ գտնվում է իմ ամենօրյա հսկողության ներքո:

Փաստորեն նոր մարդ չեք ոլորտում, բայց նման պատասխանատու պաշտոն առաջին անգամ եք զբաղեցնում, դժվար չի եղել համակերպվել նոր եւ պատասխանատու պարտականությունների հետ:

- Իմ ամբողջ գործունեության ընթացքում վարել եմ պատասխանատու պաշտոններ, բայց հիմա բոլորի համար եմ պատասխանատու, ճիշտ է, մի պահ մտավախություն ունեի, կարող է՝ չկարողանամ կատարել իմ առջեւ դրված պարտականությունները, տիրապետեմ իրավիճակին, բայց մեջս ուժ գտա եւ լծվեցի գործին: Սյունիքի տարածաշրջանային մաքսատանը բաժնի պետ եմ եղել մեկ տարի, բայց բաժնում ութ հոգի էին, իսկ հիմա՝ Մեղրու մաքսակետում, համարյա ութսուն հոգի է աշխատում, կնշանակի՝ տասն անգամ ավելացել է պատասխանատվությունը: Ավելացնեմ, որ մաքսակետի ղեկավարման պարտականությունը ստանձնեցի շնորհիվ այն բանի, որ մաքսակետում աշխատում են հիմնականում բանիմաց, գրագետ մաքսավորներ, եւ կոլեկտիվը կայուն է, ուժեղ: Փառք Աստծո, կարծիքս ժամանակամիջոցում մերվեցի կոլեկտիվին, քանի որ, կրկնում եմ, նոր մարդ չի համակարգում, կոլեկտիվն ինձ գիտեր 1998 թվականից, կոլեկտիվում փորձառու աշխատակիցներ կան, նորերն էլ կան, բայց կարողացա համախմբել բոլորին:

Վերջերս վարչապետի կողմից խոսք ասվեց, որ մինչեւ 2023 թվականը վերակառուցման վե-



րափոխման աշխատանքներ են իրականացվելու Մեղրիի մաքսակետում եւ լուրջ ներդրումներ են արվելու: Կան պատկերացումներ, թե կունկրես ինչի մասին է խոսքը:

- Այդ ծրագրերին ամբողջությամբ չեմ տիրապետում, քանզի Մեղրիի մաքսակետի արդիականացման ծրագիրը նախագծային փուլում է: Բայց մի բան պարզ է, որ մաքսակետն անձանակազրկորեն փոխվելու է: Ըստ ամենայնի՝ նորն է կառուցվելու, լինելու է տարածքների ընդլայնում՝ մուտքի եւ ելքի նոր ծանապարհներով: Նաեւ ծառայությունը համալրվելու է նոր աշխատակիցներով, ովքեր նոր գործելաձև պիտի որդեգրեն: Մենք էլ ենք սպասում արդիականացման այդ ծրագրի իրականացմանը: Լուրջ վերափոխումներ են սպասվում, քանզի եւ ՊԵԿ նախագահը, եւ նրա տեղակալը հաճախակի են լինում մեզ մոտ:

Երբ մտանք մաքսակետի տարածք, բավականին լուրջ եռուզեռի ակնատես եղանք, հետաքրքիր ակտիվություն կա, գուցե սեզոնով է պայմանավորված:

վորված: Բայց բարեփոխումների շնորհիվ մաքսակետի շարժը եռապատկվել է: Օրվա կտրվածքով, օրինակ 1400-1500 ուղետուր ենք սպասարկում: Նրանք մուտք են գործում Իրանի Իսլամական Հանրապետության տարածք եւ ձեռք բերած ապրանքներով վերադառնում Հայաստան: Բացի դրանից, օրական 150-160 բեռնատար ավտոմեքենա է մտնում Հայաստան: Հիմնականում տեղափոխում են շինանյութեր՝ ցեմենտ, կիր, գաջ, ամրան, մետաղական կառուցվածքներ, խողովակներ, ջառանկյուն խողովակներ, բիտում, նաեւ դիզելառեզին է ներկրվում վերջերս: Երբ այս ցուցանիշները բաղադրատուր ենք անցյալի հետ, նկատում ենք, որ ապրանքաշրջանառությունը մի այլ կարգի առաջընթաց է ապրել:

Եթե գաղտնիք չէ, իսկ մեր հանրապետությունից ինչ է արտահանվում:

- Օրինակ, երեկ արտահանել են գառան մսեղիք, սովորաբար թափոն, ծխախոտ, մետաղի ջարդոն, տավարի կաշի, վերելակի պահեստամասեր, հանքային ջուր, եւ այս

2020 թ. հունվարի 1-ից փոխվելու են մաքսատուրքի դրույքաչափերը. ՊԵԿ-ը հայտարարություն է տարածել

2020 թ. հունվարի 1-ից փոխվելու են իրավաբանական անձանց կողմից Եվրասիական տնտեսական միության անդամ չհանդիսացող երկրից միության տարածք ներմուծվող ավտոմեքենաների մաքսատուրքի դրույքաչափերը:

Մաքսատուրքի հաշվարկը կախված է ավտոմեքենայի մաքսային արժեքից, թողարկման տարեթվից եւ շարժիչի աշխատանքային ծավալից: Գործընթացն իրականացվում է՝ համաձայն ԵՏՀ խորհրդի 16.07.2012թ. N54 որոշմամբ սահմանված դրույքաչափի (ըստ ԱՏԳ ԱԱ համապատասխան ծածկագրերի), իսկ ԱԱՀ-ի դրույքաչափը հաշվարկվում է հարկային օրենսգրքի համաձայն:

Ինչպես ներկայում, այնպես էլ 2020 թվականից շարունակվելու է գանձվել նաեւ բնապահպանական հարկ՝ ՀՀ հարկային օրենսգրքի 171-րդ հոդվածի համաձայն:

Մաքսային վճարները ճիշտ հաշվարկելու համար կարեւոր է ուշադիր լինել արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկում տվյալ ավտոմեքենայի ծածկագրին, որը կհուշի յուրաքանչյուր ավտոմեքենայի թողարկման տարեթիվ եւ շարժիչի աշխատանքային ծավալի համար սահմանված մաքսատուրքի դրույքաչափը: Օրինակ՝ եթե իրավաբանական անձը 2020 թվականին ներմուծի 7800 եվրո մաքսային արժեքով, 2500 խորանարդ սանտիմետր աշխատանքային ծավալով շարժիչ եւ 3 տարուց ոչ ավելի թողարկման պահ ունեցող ավտոմեքենա, ապա նախ՝ կհաշվարկվի մաքսատուրք՝ մաքսային արժեքի 15%-ի չափով, այսինքն՝ կստացվի 1170 եվրո (7800 x 15%=1170 եվրո): Ապա ԱԱՀ-ն կծեմավորվի մաքսային արժեքի եւ մաքսատուրքի գումարի 20%-ը հաշվարկելու արդյունքում՝ կազմելով 1794 եվրո ((7800 +1170) x 20%=1794 եվրո): Բնապահպանական հարկ չի գանձվի, քանի որ մեքենան չի գերազանցում 5 տարին: Այսպիսով՝ իրավաբանական անձից կգանձվի 2964 եվրոյին համարժեք դրամ մաքսային վճար՝ մաքսատուրքը եւ ավելացված արժեքի հարկը գումարելու արդյունքում (1170 +1794 =2964 եվրոյին համարժեք ՀՀ դրամ):

սատուրքը կկազմի 1560 եվրո, քանի որ արժեքային դրույքաչափով հաշվարկված գումարն ավելի բարձր է, քան շարժիչի աշխատանքային ծավալի համար սահմանված դրույքաչափով հաշվարկված գումարը:

Ավելացված արժեքի հարկը կկազմի 1872 եվրո՝ մաքսային արժեքի եւ մաքսատուրքի գումարի 20%-ը հաշվարկելու արդյունքում ((7800 +1560) x 20%=1872 եվրո): Իսկ ԱԱՀ-ն եւ մաքսատուրքը միասին կծեմավորեն 3432 եվրոյին համարժեք դրամ մաքսային վճարը (1560 +1872 =3432 եվրո): Չմոռանաք գումարել նաեւ բնապահպանական հարկը, որը 6 տարեկան ավտոմեքենայի դեպքում 2% է (7800x2%=156 եվրո): Այսպիսով՝ իրավաբանական անձը մաքսազերծման համար կվճարի ընդհանուր 3588 եվրոյին համարժեք դրամ (3432 +156 = 3588 եվրոյին համարժեք ՀՀ դրամ):

7 տարուց բարձր թողարկման պահ ունեցող ավտոմեքենաների դեպքում մաքսատուրքը որոշվում է շարժիչի աշխատանքային ծավալի եւ սահմանված դրույքաչափի արտադրյալով: Օրինակ՝ 7800 եվրո մաքսային արժեքով, 2500 խորանարդ սանտիմետր շարժիչի աշխատանքային ծավալով եւ 8 տարի թողարկման պահ ունեցող ավտոմեքենայի պարագայում շարժիչի աշխատանքային ծավալի 1 խորանարդ սանտիմետրի համար սահմանված է 2,2 եվրո: Հետեաբար, մաքսատուրքը կկազմի 5500 եվրո (2500x3 x 2,2 =5500 եվրո): Ավելացված արժեքի հարկը կհաշվարկվի արդեն հայտնի բանաձևով ((7800 +5500) x20%=2660 եվրո), եւ մաքսատուրքի հետ միասին կծեմավորվի 8160 եվրոյին համարժեք դրամ մաքսային վճար (5500 +2660 =8160 եվրո): Այս ամենին կավելանա 2% բնապահպանական հարկը (7800 x2%=156 եվրո): Արդյունքում՝ իրավաբանական անձը ընդհանուր մաքսազերծման համար կվճարի 8316 եվրոյին համարժեք դրամ (8160 +156 = 8316 եվրոյին համարժեք ՀՀ դրամ):

Ի դեպ, ավտոմեքենայի մաքսային արժեքը որոշվում է՝ համաձայն ԵԱՏՄ մաքսային օրենսգրքի 5-րդ գլխի:

Կարելի է իմանալ, որ եթե իրավաբանական անձը ավտոմեքենան ներկրի 2019 թվականին, եւ մինչեւ դեկտեմբերի 31-ը ներառյալ գրանցվի «ապրանքային հայտարարագիրը», այլ ոչ թե «տարանցման հայտարարագիրը», ապա մաքսազերծումը կկատարվի 2019 թվականին գործող դրույքաչափերով: «Տարանցման հայտարարագիրը» լրացվում է սահմանային անցակետից տրանսպորտային միջոցը ներքին մաքսային մարմին տեղափոխելու համար, այսինքն՝ այն մաքսային մարմին, որտեղ փաստացի իրականացվելու են մաքսային այն ձեւակերպումները, որոնց ժամանակ լրացվելու է «ապրանքային հայտարարագիրը»: Դրա հիման վրա էլ հաշվարկվելու են մաքսային վճարները: Հետեաբար, եթե ներկրվի, օրինակ, դեկտեմբերի 30-ին, գրանցված լինի «տարանցման հայտարարագիր», բայց «ապրանքային հայտարարագիրը» գրանցվի 2020թ-ի հունվարի 1-ից սկսած, կհաշվարկվեն նոր դրույքաչափերը:

ՊԵԿ-ի տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի բաժին



ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ՀՈՒՆԱՆ ՊՈՂՈՍՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ԱՆԿԱՆՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ

Անկախության տոնը մեզ վերադարձրեց ազգային ինքնության ու պատվի զգացումը, մեր երկրի ճակատագիրը վերահսկելու իրավունքը:

Այսօր երջանիկ ենք ապրել ազատ ու անկախ Հայաստանում, որի մասին երազել են մեր նախնիները դարերով, որին հասել ենք ոչ հեշտությամբ: Բոլոր ազգերին չէ, որ տրված է նման տոն ունենալու բերկրանքը, այն նվաճում ու փայփայում են մեծ պատասխանատվությամբ:

Ուստի, մեր պարտքն է հաստատուն պահել պատմական այս հաղթանակը, համեմելով այն ազգային արժեքներով, հարուստ մշակութային ժառանգությամբ՝ կայացնել ազատ հանրությամբ ժողովրդավար երկիր եւ ի ցույց դնել մեր միասնությունն ու հայրենիքի հանդեպ սերը, հարգանքը՝ ապրածով ու կատարած աշխատանքով:

Սեպտեմբերի 21-ը նաեւ օրն է շնորհակալ լինելու բոլոր նրանց, ում շնորհիվ ունեցանք այսօրան թանկ անկախությունը, հավերժ փառք՝ դրա համար հերոսացած անհատներին:

Հիմա այլ բնագավառներում հերոսանալու ու հաղթանակներ տոնելու ժամանակներն են, ու պետք է անել ամեն հնարավորը՝ մեր զավակներին առավել հզոր, պաշտպանված ու զարգացած Հայաստան ժառանգելու համար:

Տոնի կապակցությամբ ամենքիդ մաղթում եմ կայունություն, խաղաղություն ու զարգացում թե՛ պետական, թե՛ քաղաքացու անձնական կյանքի բոլոր ոլորտներում, վստահություն մեր սիրելի հայրենիքի բարի ու վառ ապագայի հանդեպ:

Ամուր ոգի՝ Հայոց բանակին, որը մեր անկախության անասանության գրավականն է, խաղաղ ծառայություն՝ մեր սահմաններին կանգնած զինվորներին, հզորացում՝ մեր տնտեսությանը, զարգացում ու բացահայտումներ՝ մեր գիտական մտքին, համաշխարհային ծանաչման նոր հորիզոններ՝ մեր մշակույթին, բարեկեցություն՝ բոլորիդ օջախներին:

Շնորհավոր Սեպտեմբերի 21:

Սեպտեմբերի 21-ին Սյունիքում նշվեց Անկախության փոնը





Նիկոլ Փաշինյանը Սյունիքում ծանոթացել է զորավարժությունների ընթացքին

Էջ 1

Հայաստանի Հանրապետության կառավարության կոչին եւ զինվորագրվել Հայաստանի Հանրապետության պաշտպանությանը:

Ըստ էության, այժմ մեծ ուրախությամբ արձանագրվում է, որ զորավարժությունների հայտարարումից, մեկնարկից հետո 24 ժամվա ընթացքում 33 զինկոմիսարիատներում քաղաքացիների հերթեր են գոյացել, որոնք շտապել են իրենց պարտքը կատարել հայրենիքի հանդեպ: Եվ ես ուզում եմ առաջին հերթին շնորհակալություն հայտնել ձեզ՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին, ովքեր շատ արագ եւ օպերատիվ կերպով արձագանքել եւ ստանձնել են իրենց պարտքի կատարումը հայրենիքի հանդեպ: Սա չափազանց կարեւոր է, որովհետեւ արդեն կարող ենք ասել, որ այս զորավարժությունները մեզ տվեցին վստահություն, որ Հայաստանի Հանրապետության զինված ուժերը մարտունակ են, Հայաստանի Հանրապետության հանրությունը մարտունակ է, եւ մենք միասին կարող ենք լուծել մեր առաջ դրված խնդիրները՝ Հայաստանի Հանրապետության՝ մեր հայրենիքի պաշտպանությունը կազմակերպելու հարցում:

տեսնում եմ բարձր մարտական տրամադրությամբ, տեսնում եմ դոփսով եւ նվիրված հայրենիքի պաշտպանության գործին: Ես ուզում եմ նաեւ ձեր ընտանիքներին շնորհակալություն հայտնել, որոնք այս ընթացքում առանց տրտնջալու եւ նույնիսկ գոհունակությամբ են արձանագրում, որ իրենց ամուսինները, որդիները, հայրերը մասնակցում են հայրենիքի պաշտպանության գործին: Ես ուզում եմ բոլորիս մաղթել հաջողություններ, ես հիմա արդեն համոզված եմ, որ զորավարժություններն արդեն իսկ ունեն լավ արդյունքներ, եւ բոլորդ այստեղից ձեր քաղաքացիական կյանքին կվերադառնաք բարձր տրամադրությամբ, մարտունակությամբ, միասնականությամբ, կամքի եւ վճռականության ոգին տարածելով նաեւ քաղաքացիական կյանքում: Չնայած հիմա մենք ոչ քաղաքացիական կյանքում, ոչ էլ զինված ուժերի շրջանում նման մթնոլորտի պակաս չունենք, բայց այդ մթնոլորտների ներդաշնակեցումը, համակցությունը, համադրումը շատ կարեւոր է մեր երկրի համար:

Չորավարժությունների սիրելի մասնակիցներ, պարունայք սպաներ, զենեարվներ, կառավարության հարգելի անդամներ, ես մեկ անգամ ուզում եմ բոլորիս շնորհավորել այս մասշտաբային միջոցառման կապակցությամբ եւ արձանագրել, որ մեր երկիրն այս զորավարժությունների արդյունքում ցույց տվեց իր մարտունակությունը, ցույց է տալիս իր կենսունակությունը եւ ցույց է տալիս պետությունների մառավարություն-հանրունկության համագործակցության եւ վստահության բացառիկ բարձր աստիճան, ինչը մի երեւոյթ է, որի համար մենք իսկապես պետք է միմյանց շնորհավորենք: Ձեզ մաղթում եմ, որ ձեր բոլոր կրակոցները՝ ուղղված պայմանական հակառակորդին, խոցեն պայմանական թիրախները: Շնորհակալ եմ:

Այնուհետեւ վարչապետ Նիկոլ Փաշինյանն աշխատանքային խորհրդակցություն է անցկացրել բանակային կորպուսի հրամանատարության եւ Սյունիքի մարզի ղեկավարության հետ, որի ընթացքում քննարկվել են մարտական պատրաստականությանը, իրական իրավիճակին եւ մարտական խնդիրներին վերաբերող հարցեր:

Այնուհետեւ վարչապետ Սուրեն Պապիկյանի եւ Սյունիքի մարզպետ Հունան Պողոսյանի ուղեկցությամբ շրջայց է կատարել Սիսիան քաղաքում, զրուցել բնակիչների հետ:

Սիսիանում վարչապետ Փաշինյանը ծաղիկներ է դրել Արցախյան ազատամարտի զոհերի հիշատակը հավերժացնող հուշարձանին, այցելել նաեւ Սուրբ Հովհաննես եկեղեցի:

Լայնածավալ ռազմավարական զորավարժություն՝ «Զինված ուժերի ծավալումը, հակառակորդի ագրեսիայի դիմագրավումը»

2019 թ. սեպտեմբերի 24-ից հոկտեմբերի 5-ն անցկացված զորավարժությանը մասնակցում էին Սյունիքում տեղաբաշխված զորամիավորումները եւ:

ՂՌԻ պատրաստության 2019թ. պլանի համաձայն, սեպտեմբերի 24-ին ՀՀ տարածքում մեկնարկում է «Զինված ուժերի ծավալումը, հակառակորդի ագրեսիայի դիմագրավումը» թեմայով լայնածավալ ռազմավարական զորավարժություն, որին ընդգրկված են նաեւ պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինները:

Չորավարժության նպատակներն են զինված ուժերի ծավալման եւ մարտական կիրառման պլանների գործնական ստուգումը, ներգրավված ուժերի եւ միջոցների մարզումը, զորահավաքային խնդիրների կատարման ուղղությամբ ՀՀ պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններին, ՂՌԻ ղեկավարման օղակներին եւ զորահավաքային ռեսուրսներին գործնական փորձի հաղորդումը, զորավարժություններին ընդգրկված ուժերի, միջոցների, զորահավաքային մարմինների եւ ռեսուրսների հնարավորությունների ուսումնասիրումը եւ ձգարտումը, շտաբների գործողությունների ներդաշնակումը:

Չորավարժության ընթացքում ՂՌԻ տարբեր ստորաբաժանումների կողմից իրականացվել են պայմանական նշանակետերի խոցումներ՝ մարտական կրակի կիրառմամբ:





Ազադ Գասպարյան. մեր օրերի հերոսներից մեկը եւ Սյունյաց լեռնաշխարհի նվիրյալը



Այդ գնահատականի հիմնավորվածության մեջ կհամոզվի յուրաքանչյուր ոք, ով կձանձրանա Ազադ Գասպարյանի գլխավորած ճանապարհաշինական ընկերության հերթական արարումին:

Հասցեն՝ Մ-2 մայրուղու Տաշտու-նի խաչմերուկ-Այգեծոր հատված: Մեղրի տանող մայրուղու այդ հատվածում մեր ստեղծագործական խումբը եղել էր ս.թ. հուլիսի 27-ին: Եվ երբ տեսանք ճանապարհին կատարվող աշխատանքների աննախադեպ մասշտաբը, ոչ միայն հիացմունք ու ոգեւորություն ունեցանք: Մեզանում տրամաբանական հարցեր առաջ եկան՝ մի՞թե հնարավոր կլինի միանգամից այդ ամենն անել, կհաջողեն մինչեւ ծմբեռնամուտ այս ծավալի հողային աշխատանքներն ավարտին հասցնել, վերակառուցել կամ կառուցել ենթակառուցվածքները, տեղադրել ասֆալտի վերին շերտը, ճանապարհին պատշաճ կահավորումներ անել... Սեպտեմբերի 25-ին մենք նորից Մեղրու ճանապարհի դժվարին այդ տեղամասում էինք: Ծանապարհաշինական աշխատանքների՝ մոտ 10 կմ ձգվող հրապարակում իսկական եռուգեռ էր, ինչպես եղել էր երկու ամիս առաջ, ինչպես եղել էր անցած երկու ամսվա ամեն մի օրը. տասնյակ մեքե-

Այդ նվիրյալների կողմէ տրվել Մեղրու ճանապարհաշինարարների ընկերությունն է, որը գլխավորում է Սյունյաց աշխարհի մերօրյա երախտավորներից մեկը՝ ճանաչված ճանապարհաշինարար Ազատ Գասպարյանը:

նաներ ու սարքավորումներ, ժամանակակից տեխնիկական միջոցներ, իրենց գործին լավագույնս տիրապետող մոտ յոթ տասնյակ մարդիկ: Եվ, իհարկե, Ազատ Գասպարյանը... ոչ թե հրամանատարի կեցվածքով ու հրամանատարի դերում, այլ կազմակերպչի, համակարգողի, ծագող խնդիրները ժամ առ ժամ լուծողի դերում... Ու այդ ամենը՝ արեակաթ լեռներով պարուրված կիրճում: Հողային աշխատանքների ավարտը մոտ է: Արհեստական կառուցվածքների վերանորոգումը, իսկ տեղտեղ՝ կառուցումը նույնպես մոտ է ավարտին: Աշխատանքների առաջնային գիծը, որքանով տեսանք, ասֆալտի վերին շերտի տեղադրումն է: Ծանապարհի ասֆալտբետոնի ծածկի լայնությունը 6 մ 60 սմ է (նախկին 6 մետրի փոխարեն), ծածկի հաստությունը՝ 7 սմ.: Նոր ճանապարհահատվածի

կողնակները եւ նախկինից ավելի լայն են՝ 1,5 մ (նախկինում եղել է 1 մետր): Ասել է թե՛ ճանապարհի երթեւեկի գոտու լայնությունը մոտ 9 մետր է: Այդ չափանիշներով ճանապարհահատվածը կհամապատասխանի երրորդ կարգի ճանապարհին առաջադրվող պահանջներին: Այնպես որ՝ Մ-2- Երեւան-Երասխ-Գորիս-Մեղրի-Իրանի սահման ճանապարհի կմ 354 + 520-ից մինչեւ կմ 364 + 000 հատվածը միանգամայն նոր տեսք կունենա: Այդ ամենը՝ մինչեւ նոյեմբերի սկիզբ, իսկ կահավորումը՝ մինչեւ տարվա վերջ: Միեւնույն ժամանակ... Երբ Դիրբազի լեռնանցքից իջնում ենք Մեղրի, աչքի է զարնում մայրուղու հանդեպ տիրոջ սրտացավությամբ իրականացվող խնամքը: Հիմա էլ զուգահեռաբար պատրաստվում են ծմբանը. մեկ էլ հստակ խնդիր ունեն՝ ծովի մակերեսույթից 2500 մ բարձրությամբ անցնող ճանապարհը, որտեղ ծմբանն ամենասաստիկ բուքն է լինում (զրեթե պարբերաբար) եւ ամենահաստ ձյան շերտը, ոչ մի րուպե չպետք է անանցանելի լինի մեքենաների համար, քանզի դա Հայաստանի Հանրապետությունն արտաքին աշխարհի հետ երկրային ճանապարհով հաղորդակից դառնալու բացառիկ մայրուղի է: Ծանոթանում ենք այդ ամենին ու կրկին հանգում դեռեւս տարիներ առաջ ձեւավորված համոզմունքին՝ միայն երկրի տիրոջ ու մշակի զգացողությամբ մարդիկ կարող են տարվա բոլոր օրերին անցանելի, անվտանգ ու բարեհարմար վիճակում պահել հանրապետության համար իրոք ռազմավարական նշանակություն ունեցող ավտոմայրուղին: Այդ նվիրյալների կողմէ տրվել Մեղրու ճանապարհաշինարարների ընկերությունն է, որը գլխավորում է Սյունյաց աշխարհի մերօրյա երախտավորներից մեկը՝ ճանաչված ճանապարհաշինարար Ազատ Գասպարյանը: Հարգանք նվիրյալների այդ կոլեկտիվին ու նրա վաստակաբեռ ու փորձառու ղեկավարին: **ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ**

Տարեցների ու լռության գյուղը. ինչպես են Լիճքում ասպիճանաբար մոռանում մանկան ծիծաղը

Լիճքը տարբերվում է ոչ միայն իր բացառիկ գեղեցկությամբ, այլ նաեւ մարդկանցով: Այստեղ ապրում են միայնակ, բայց հոգատար ծերունիներ, որոնք պատրաստ են գրուցել, հյուրասիրել եւ նույնիսկ որդեգրել: Սյունիքի մարզի Լիճք գյուղը խիստ տարբերվում է երկրի շատ գյուղերից: Այստեղ խնձոր չեն գողանում, ապակիները գնդակներով չեն կոտրում: Միշտ լռություն է, իսկ մանկական ծիծաղի արձագանքը լեռներում չի տարածվում: Այս գյուղում երեխաներ չկան: Գյուղում ընդամենը 67 մարդ է ապրում, բոլորն էլ՝ պատկառելի տարիքի: Նրանք քայլում են նեղիկ փողոցներով եւ հոգ տանում իրենց տների մասին: Բնակիչները Լիճքն անվանում են «մեծ ծերանոց», բայց գյուղում մթնոլորտը ճնշող չէ: Հակառակը՝ գյուղ մտնելիս հյուրերին դիմավորում են «Շատ շարժվել՝ երկար ապրել», «Հգիտես, մի վնա-

ծոներ եւ քաղցրեղեն եւ պատրաստում», - ասում է նա եւ ցույց տալիս մաքրությունից փայլող տունը, չորացող անուշահամ լավաշը, կոնֆետ հյուրասիրում եւ առաջարկում մնալ իր տանը: Նա սիրով պատմում է իր զարմիկի՝ Վասիլի մասին, որը հաջիկի հայրն է: Ասում է՝ իր բախտը բերել է, քանի որ միշտ պաշտպանել է իրեն, իսկ հիմա ոչ միայն չի թողնում ձանձրանա, այլ նաեւ հոգ է տանում, ինչպես մանուկ հասակում: Մենք փոխանցում ենք Օլյա տատիկի խոսքերը Վասիլ պապիկին, նա գոհ ժպտում է եւ կամաց ասում. «Նա արժանի է դրան»: Այնուհետեւ կանչում է հաջիկին, եւ նրանք միասին լրագրողներին առաջարկում են գնալ այգի, որպեսզի համտեսեն տեղական բրենդ Լիճքի տանձը: «Ամոթ է գալ Լիճք եւ տանձ չուտել», - ասում է հաջիկը եւ կնոջը՝ Նառային հասկացնում, որ սուրճ եփի:



սիր», «Կա առողջություն, կա կյանք» գրություններով, որոնք ավտոտնակների վրա գրել է գյուղից հեռացած բնակիչներից մեկը: Երբեմն աչքի են ընկնում կանաչ աղբամաններ, որոնք, չգիտես ինչու, ասոցացվում են մանկապարտեզի հետ: Եվ, իհարկե, գյուղի «տեսարժան վայրը» խանութն է՝ «Խաչիկի մոտ» ուրախ ցուցանակով: Խանութպանը պատմում է, որ անվանումը հորինել է գյուղի բնակիչները: Երբ եկել է «ռեկլամիստը» (ցուցանակի դիզայները), խանութպանը տեղում չի եղել: Խանութի մոտ հավաքված տղամարդիկ առաջարկել են, գրել են «Խաչիկի մոտ» անվանումը: Խանութ այցելում են գյուղի բոլոր բնակիչները, բայց այստեղ ամենասպասված այցելում 80-ամյա տիկին Օլյան է. 3 դուստր, 9 թոռ եւ 10 ծոռ ունի, բայց մենակ է ապրում: Օլյա տատիկն առաջին հայացքից աշխույժ եւ ուրախ կին է: Նա պատմում է, թե ինչպես է մայրն իր կամքին հակառակ ամուսնացրել, բայց ամուսինը՝ Արամը, այնքան լավ է պահել, որ գյուղի բոլոր կանայք նախանձել են իրեն: «53 տարի միասին ենք ապրել: Նա ինձ սիրում էր, խանդում, հոգատար էր: Արամն արդեն 10 տարի է՝ չկա: Իհարկե, կարոտում եմ, բայց չեմ սիրում իմ տխրությունը պարտադրել ուրիշներին, դրա փոխարեն տնային գործերով եմ զբաղվում, երեխաներիս համար չորե, պահա-

խաչիկը գյուղում չի ապրում: Նա ամեն օր գյուղ է գալիս ծոռների մոտ, բացում խանութը, չէ որ գյուղի տարեց բնակիչները չեն կարող ուրիշ տեղից առետուր անել: Նրա «նիսայի» տետրում գրված են գրեթե բոլոր բնակիչների անունները եւ պարտքի չափը: Նա խոստովանում է, որ սիրում է գյուղը եւ կուզեր ապրել այստեղ, բայց Լիճքում դարձրոց չկա, իսկ կինը բուժքույր է աշխատում Մեղրիում: Այդպես նրանք ստիպված են շաբաթվա մեծ մասն անցկացնել քաղաքում, հանգստյան օրերը՝ գյուղում: Կամաց-կամաց դատարկվում է: Շատ տներ կան, որտեղ վաղուց լույս չի վառվել: Այդ ամենը տխուր է, բայց միգրացիոն ինչ-որ բան փոխվի, իզոնը ենք եկեղեցու համար նոր դուռ պատվիրել: Այնտեղ դեռ շատ սերունդներ են աղոթելու», - ասում է Խաչիկը: Ինչպես պնդում են բնակիչները դատարկության պատճառը աշխատատեղերի բացակայությունն է եւ ծանր սոցիալական պայմանները, դրա հետ մեկտեղ նրանք դեմ են մոտակայքում գտնվող հանքի շահագործմանը: Տատիկները եւ պապիկները վստահ են, որ այն վնաս է հասցնում ամբողջ մարզին ու երկրին, իսկ նրանք ուզում են, որպեսզի իրենցից հեռու ապրող երեխաները եւ թոռները ոչ միայն լավ կրթություն ստանան, այլ նաեւ մաքուր ջուր խմեն ու առողջ լինեն:

«Դավիթ բեկ» հասարակական կազմակերպությունը՝ Սյունիքի սրբավայրերի եւ հնավայրերի պարզաճ պահպանության ջարդագույն

Չաճեղի և Եկատեղի, որ «Դավիթ բեկ» հասարակական կազմակերպությունը՝ Նախագահության մեր հայրենակից, մոսկվայաբնակ Գագիկ Մելքումյանի, իր գործունեության առաջնահերթություններից մեկը հռչակել է Սյունիքի սրբավայրերի ու հնավայրերի պարզաճ պահպանությունը:

Այդ ուղղությամբ կատարված աշխատանքներից հերթական դրվագին ծանոթանալու համար սեպտեմբերի 19-ին «Սյունյաց երկրի» ստեղծագործական խումբն այցելեց Կապանի տարածաշրջանի ճակատեն գյուղ:

Տղերիս հեղինակին եւ Վահրամ Օրբելյանին ուղեկցում էր Յուսիկ Սարգսյանը՝ իր բնօրրանի պատմության եւ տարածաշրջանի դիտարժան վայրերի հրաշալի գիտակ մի անձնավորություն:

Կապանից մոտ 10 կմ հարավ-արեւելք գտնվող այդ գյուղը հին ժամանակներում մտնում էր Սյունյաց աշխարհի Կովսական (Գրհամ) գավառի մեջ:

Գյուղում առաջինն այցելեցինը կենտրոնում գտնվող Սուրբ Յուսիկի մեկ եկեղեցի (կառուցվել է 1880 թ.):

Դեռեւս 2002-ին էլ վերականգնվել տասնամյակների անտարբերությունից խոնարհված այդ տաճարը:

Նախաձեռնողն ինքը՝ Գագիկ Մելքումյանն էր:

Այդ թվականին էլ տեղի է ունեցել Սուրբ Յուսիկի մեկ վերածնունդ՝ ձեռնարկ էր Տեր Աբրահամ եպիսկոպոս Մկրտչյանի:

Գագիկ Մելքումյանի բարերարությունը, սակայն, չի ավարտվել բուն եկեղեցու վերանորոգմամբ:

Ծավալուն հողային աշխատանքներ կատարելու շնորհիվ բարեկարգվել ու ակնհաս թեստ էր բերվել եկեղեցու շրջակայքը, հողային ծածկույթից ազատվել են հնամենի տապանաքարերը, որոնք գյուղի պատմության հավելյալ վկայարաններ են:

Եկեղեցու եւ շրջակայքի պահպանությունն այսօր էլ «Դավիթ բեկ» կազմակերպության հոգածության ներքո է:

Այցելեք այդ տաճար եւ կհամոզվեք, թե ինչպիսի մաքրություն, խաղաղություն է այնտեղ թագավորում, թե խնամքի ինչպիսի ձեռագիր կա այնտեղ:

Սակայն ճակատենի հովանավոր տաճարը միայն Սուրբ Յուսիկի մեն չէ:

2019 թ. օգոստոսի 23-ին, Հայոց անկախության հռչակագրի ընդունման հերթական տարեդարձի օրը, գյուղի հարավ-արեւմտյան բարձունքում՝ անտառի բացատում, կանգնեցվել է երկաթակուռ մի խաչ՝ 6 մ x 3 մ չափսերով:

Խաչի օրհնությունը կատարել են արժանապատիվ Տեր Սահակ քահանա Մարտիրոսյանը եւ Կապանի տարածաշրջանի հոգեւոր հովիվ Տեր Վահան քահանա Յեքոյանը:

«Դավիթ բեկ» հասարակական կազմակերպության կողմից կանգնեցված այդ խաչը, որից ծառագող լույսը յուրօրինակ խորհրդավորություն է սփռում գյուղի ամբողջ տա-

րածքի ու մերձակայքի վրա եւ տեսանելի է նույնիսկ շատ հեռվից, նաեւ հույս է արթնացրել գյուղացիների մեջ, որ լեռնային այդ գյուղը՝ դարերի խորքից եկող, շարունակելու է երթը հավերժի ճամփով:

Ճակատենում կա հրաշալի մեկ այլ ուխտատեղի եւ: Դա Սուրբ Հովհաննես մատուռն է՝ գյուղից մոտ 3 կմ հարավ՝ Ծավ տանող ավտոմայրուղու աջ մասում՝ բարձունքի վրա:

Մատուռը 2009-ին հիմնել է ճակատեն գյուղի մեկ այլ երախտավոր զավակ՝ Արշավիր Սարգսյանը:

Այն օծվել է Տեր Աբրահամ եպիսկոպոս Մկրտչյանի կողմից:

Առաջին իսկ օրվանից Սուրբ Հովհաննեսն ուխտատեղի է ոչ միայն ճակատենցիների, այլեւ տարածաշրջանի հավատավոր բնակչության համար:

Առանց չափազանցության՝ ամեն օր այնտեղ կարելի է ուխտավորների հանդիպել:

Ճակատեն կատարած մեր ուխտագնացությունն առիթ էր՝ ավելի ամբողջական ծանոթանալու գյուղի մյուս սրբավայրերին ու հնավայրե-

րին նույնպես: Պարզվում է՝ գյուղը, այդ առումով, Սյունիքի մարզի ամենահարուստ բնակավայրերից է:

Նախ եղանք Դուզուն արտի եկեղեցու ավերակներում:

Պահպանվում է հյուսիսային պատի մի մասը, կան բազմաթիվ խաչքարեր:

Պատմում են՝ 1970-ականների մեխորացիայի ժամանակ տրակտորիստը հրաժարվել է դաշտի այդ հատվածը հերկել եւ հողին հավասարեցնել:

Եվ հիմա հավատավոր ճակատենցիներն այցելում են այդ սրբավայր:

Այդ վայրը Դուզուն արտ են անվանում հիմա:

Մինչդեռ դա Գեղեցու խութ գյուղատեղին է:

Սկզբնական անունը, ամենայն հավանակամությամբ, եղել է Եկեղեցու խութ:

Գյուղից 5 կմ հարավ-արեւելք է գտնվում Իրիգիս գյուղատեղին. Ծավ տանող ճանապարհի ձախ կողմում՝ բարձրադիր տեղում: Պահպանվում է թաղա-



կապ եկեղեցին, նկատվում են ջրանցքի, կավե խողովակների, գերեզմանների, խաչքարերի հետքեր:

Ենթադրվում է, որ Իրիգիսը Ստեփանոս Օրբելյանի հիշատակած Եղեգիք գյուղն է:

Ճակատենից 6-7 կմ հարավ՝ բլրի վրա է գտնվում Շնորեն գյուղատեղին (նաեւ կոչվել է Շինդիրյան, Շնորեն):

Գյուղն ապաբնակեցվել է 1930-ականներին՝ բնակավայրերի խոշորացման հետեանքով:

Շինությունների ավերակները նշմարվում են:

Գյուղը նաեւ եկեղեցի է ունեցել, որ գիտական գրականության մեջ երբեմն սխալմամբ անվանվում է Շինդիրյան եկեղեցի:

Ճակատենից մոտ 3 կմ հարավ-արեւելք է գտնվել Շինթաղ գյուղը, որի շինությունների հետքերը նույնպես պահպանվում են:

Ճակատենից հարավ-արեւելք է գտնվել Սուսանի գյուղը:

Տարեցները պատմել են, որ 19-րդ դարավերջին եւ 20-րդ դարասկզբին գյուղը կանգուն էր ու հայաբնակ:

“*Ներկայիս ճակատենը, ըստ ավանդույթի, հիմնադրվել է 17-րդ դարավերջին: Բնակատեղին նախ եղել է Իրիգիս կոչվող հանդամատում (այդ գյուղի մասին քիչ առաջ նշեցինք), հետո՝ 19-րդ դարասկզբին տեղափոխվել է ներկայիս տեղը:*



Դա Սուսանդաղ լեռան ստորոտն է, որը մտնում է Բարգուշատի լեռնաշղթայի համակարգի մեջ:

Ի դեպ, Սուսանդաղն այնքան էլ բարձր լեռ չէ. ամենաբարձր գագաթը 1300 մետր է:

Ճակատենի մերձակայքում՝ 4-5 կմ արեւելք, կա եւս մեկ գյուղատեղի՝ բարձրադիր լեռնային վայրում, բլրի ստորոտում: Նշմարվում են տների ավերակները:

Դա Գրմեջ գյուղատեղին է, որտեղ նույնպես եղել է Աստծո տաճար:

Ըստ պատմական գրականության՝ ճակատենի տարածքի ամենահին ու խոշոր բնակավայրը Վարոս գյուղն է եղել, որտեղ էլ գտնվում էր Վարոսի վանքը:

Անտառում ծվարած այդ գյուղում, որտեղ պետք է որ լինեն եկեղեցու ավերակներ, ճակատենցիներին հայտնի չէ, ուստի եւ չկարողացանք ստույգ տեղորոշել ու այցելել:

Այդ գյուղի մասին նշում է Ստեփանոս պատմիչը՝ իբրեւ Տաթևի վանքին 10 չափ հարկ վճարող բնակավայր:

Վարոսի վանքի մասին հիշատակում է նաեւ Դեռնոյ Ալիշանը՝ Կովսականի գյուղերի մեջ:

Եվ, այդ բոլորով հանդերձ, ճակատենի տարածքի ամենանշանավոր մշակութային ժառանգությունը Սյունյաց աշխարհի եւ առհասարակ Մեծ Հայքի ամենանշանավոր ամրոցներից մեկն է՝ Գրհամը:

Ճակատենից հարավ-արեւելք գտնվող այդ բերդ-ամրոցի մասին առաջինը հիշատակում է Ստեփանոս Օրբելյանը:

Ըստ երեւոյթին Գրհամը գոյություն է ունեցել 9-10-րդ դարերից:

Հիշատակվում է 1104 եւ 1166 թթ. թուրք-սելջուկների արշավանքի կապակցությամբ:

Տեսակետը, որ հենց դա է Գրհամը, հաստատել է նաեւ մեր հայրենակից, հայագետ Թ. Հակոբյանը:

Ըստ նրա՝ Գրհամը գտնվում է Ղափան-Մինջեան երբեմնի երկաթգծի Շաբլու կամ Շարիբու կայարանի դիմացի լեռան գագաթի վրա (մենք նույնպես այդ կարծիքին ենք), որին ճակատենցիները հիմա էլ անվանում են Գրվա կամ Գրվին սեռ:

Ճակատեն անվանումը, որը լուսահոգի Ռոբերտ Էջանանցու կարծիքով պահպանվել է սկիզբ ունի, գագաթ իմաստն է պարունակում:

Գյուղանունը ոմանք էլ բացատրել են որպես արեւելահայաց կողմ՝ Բաղքի ճակատամաս:

Գյուղը նաեւ այլ կերպ է անվանվել՝ Ճաքատեն, Ճգտեն, Ճըկտեն, Ճըկտեն, Ճըքատեն, Ճկատեն, Ճկտեն, Չաքիդին, Չըքաղեն, Չիկաղեն, Չքատեն, Չքտեն:

Գյուղը, ըստ նոր հարկացուցակի, Տաթևի վանքին վճարում էր 1200 դահեկան հարկ:

Ներկայիս ճակատենը, ըստ ավանդույթի, հիմնադրվել է 17-րդ դարավերջին:

Բնակատեղին նախ եղել է Իրիգիս կոչվող հանդամատում (այդ գյուղի մասին քիչ առաջ նշեցինք), հետո՝ 19-րդ դարասկզբին տեղափոխվել է ներկայիս տեղը:

Գյուղի առաջին բնակիչները եղել են Իրանից տեղահանված Մելիք Աղապույան եւ Կարախանյան տոհմի ներկայացուցիչները:

Գյուղը հատկապես զարգացում է ապրել խորհրդային տարիներին. համարվում էր Կապանի շրջանի խոշոր տնտեսություններից մեկը, որտեղ զբաղվում էին անասնապահությամբ, դաշտավարությամբ, թռչնաբուծությամբ, մեղվաբուծությամբ, խոզաբուծությամբ:

Դեռեւս 1967 թ. գյուղում հավերժացվել է Մեծ հայրենական զոհված 99 ճակատենցիների հիշատակը:

Անկախության տարիներին գյուղի կենտրոնում կառուցվել է մի համալիր, որն իր մեջ ամփոփում է նաեւ Արցախյան հերոսամարտում զոհված համազորացիների հիշատակը:

Չարմանահրաշ բնություն ունեցող գյուղը, որի հարավային մասով հոսում է ճակատեն (Ջաղացի) գետը՝ սակավաջուր դարձած, հարուստ է դաշտային սառնորակ աղբյուրներով, գրավում է նաեւ զբոսաշրջիկների ուշադրությունը:

Մինչդեռ խմելու ջրի խնդիրը եղել է մտում է չլուծված. դրա հիմնովին լուծմամբ, համոզված ենք, ճակատենը նոր վերածնունդ կապրի...

Սամվել Ալեքսանյան

Օքսֆորդի համալսարանի կապանցի ուսանողը մասնակցելով EUROP ծրագրին, անօդաչու թռչող սարքերի հեղափոխական նախագիծ է իրականացրել

Օքսֆորդի համալսարանի ուսանողների համար նախատեսված Ինժեներական հետազոտությունների ծրագիրը (EUROP) ֆինանսավորում է ուսանողներին, որպեսզի նրանք ամառային արձակուրդների ընթացքում գիտնականների հետ իրական հետազոտական նախագծեր իրականացնեն: Ծրագիրը նպատակ ունի օգնել ուսանողներին կարիերայի ձեռնարկի ընթացքում, նպաստել նրանց աշխատանքի եւ հմտությունների ձեռնարկմանը:

Օքսֆորդի համալսարանի ինժեներական գիտությունների բաժնի կայք էջն անդրադարձ է կատարել Ինժեներական հետազոտությունների ծրագրի (EUROP) շրջանակում անօդաչու թռչող սարքերի հետազոտական նախագիծ իրականացրած հայագի Արեն Կարապետյանին:

Անվճար հիմունքներով Օքսֆորդի համալսարանում սովորող 20-ամյա Արենը ծրագրի շրջանակում իր հետազոտությունն իրականացրել է ավտոմատ կառավարման տեխնիկայի ոլորտում:

«Ավտոմատ կառավարման տեխնիկան յուրահատուկ ճյուղ է», - հայտնել է Արենը եւ հավելել, որ Օքսֆորդի համալսարանի հետազոտիչ ու բովանդակալից ծրագրից հետո որոշել է դոկտորականը պաշտպանել հենց այս գծով:

«Նպատակ ունեի պատկերացում կազմել այն մասին, թե ինչ է նշանակում լինել ուսանող-հետազոտող եւ որ ամենակարեւորն է՝ որպես հետազոտող կատարելագործվել», - հայտնել է Արենը:

Ոչ մեծ անօդաչու թռչող սարքերը, ինչպիսին են 27 գրամ կշռող քվադրոկոպտերները, որոնք ուսումնասիրում է Արենը, շատ մանրամասն են, սակայն թեթեւ կշռի պատճառով այն հեշտ է պայթեցնելը կամ խոցելը: Հայ երիտասարդն օգտագործում է EUROP-ի հնարավորությունն առանձին անօդաչու սարքի կառավարման, հզորացման եւ ծրագրավորման մեթոդների մշակման համար՝ տարբեր առաջադրանքներ կատարելու նպատակով: 4-րդ տարվա իր նախագիծը շրջանակում երիտասարդը կստեղծի ինքնուրույն աշխատող դրոնների փոքրիկ հավաքածու:

Ծրագիրն Արենին լայն մտահորիզոն է տվել իրական ուսումնասիրությունների վերաբերյալ:

«Ծրագրային ապահովման, ավտոմատ կառավարման, ինչպես նաեւ առանցքային հետազոտական հմտությունների տեսանկյունից ես արդեն հասցրել եմ շատ բան սովորել», - հայտնել է երիտասարդը եւ հավելել. «Նախագիծը սկսելուց կարճ ժամանակ անց ես ինձ հա-



մար բացահայտեցի հետազոտությունների մարտահրավերները եւ այն, որ դրանք շատ դժվարեցրել են անձայրաժիր լինելը:

Երիտասարդի խոսքով՝ այս ծրագիրը չափազանց տարբերվում է այլ միօրինակ ուսումնական ծրագրերից:

«Բաժնի տրամադրած ռեսուրսների եւ իմ ղեկավարների օգնության շնորհիվ ես այժմ ավելի անկախ եւ ավելի հեռատեսորեն եմ լուծում իմ առջեւ ծառայած խնդիրները», - ասել է նա:

Tert.am

Կապանի երկրագիտական թանգարանում գույների խաղ էր

Կապանի երկրագիտական թանգարանում «Եվրոպական մշակույթի օրերի» շրջանակում հոկտեմբերի 1-ին բացվեց կապանցի գեղանկարիչ, հանրապետության նկարիչների միության անդամ Լորիկ Մինասյանի ստեղծագործությունների անհատական ցուցահանդեսը: Ցուցադրանքն այցելիչներին ընկնում ժանրային բազմազանությամբ. ներկայացված էր մոտ 50 բնանկար, որոնց մի մասը ցուցադրված էր թանգարանի բակում: Գեղանկարչի փոխանցմամբ՝ իր համակուրսեցի, հանրապետությունում ծանաչված գեղանկարիչ Լիկոյ Լիպարյանի շնորհիվ 2003 թվականից «մտել է» այդ ժանրի մեջ:



Ցուցահանդեսի բացմանը մասնակցում էին Սյունիքի մարզպետ Յուրայան, Պողոսյանը, Կապանի քաղաքապետ Գեորգ Փարսյանը, գեղանկարչի արվեստով հետաքրքրվող տարբեր տարիքի եւ զբաղմունքի մարդիկ:

Կապանի երկրագիտական թանգարանի տնօրեն Գրիշա Սմբատյանը ներկայացրեց գեղանկարչի ակունքները, նախնիները, ովքեր բրոնզագործ են եղել, նրա անցած ստեղծագործական ուղին: Լորիկը, ով ավարտելով Երեւանի Խ. Աբովյանի անվան մանկա-

րդ Լորիկին ծանաչում է ուսանողական նստարանից: «Լորիկը կապանյան գեղանկարչության անցյալն է, կառուցում է ներկան եւ ծանկի հարթում գեղանկարչի նոր սերնդի համար, ովքեր արվեստի այդ ճյուղի շարունակողները պետք է լինեն», - ասաց Յուրայանը:

Լորիկի գեղանկարչության մասին անմիջական խոսք ասաց Ժիրայր Թունյանը:

Սյունիքի մարզպետ Յուրայան Պողոսյանն այն միտքը հայտնեց, որ Լորիկի գեղանկարչության ճշմարիտ գնահատականն արվեստաբանները կարող են տալ. իսկ ինքը դիտելով ցուցադրված բնանկարները՝ հոգեկան հանգստություն է ստանում, եւ այն տպավորություն ունի, որ Լորիկն իր գեղանկարներն արարում է սիրով ու թեթեւությամբ:

Սյունիքի մարզի մշակութային կյանքում ներդրած ավանդի, հայ կերպարվեստը միջազգային եւ հանրապետական ցուցահանդեսներում ըստ արժանվույն ներկայացնելու համար գեղանկարիչ Լորիկ Մինասյանը պարգևատրվեց Սյունիքի մարզպետի շնորհակալագրով:

«Ես ձգտել եմ դրական լիցքեր հաղորդել կտավին, որի միջոցով այն փոխանցվի դիտողին՝ բարությունը, սերը բնության հանդեպ, Աստծո հանդեպ: Կցանկանալի, որ ցուցահանդեսի այցելուները հոգեպես բավարարված հեռանան այստեղից», - իր երախտագիտության խոսքում ասաց գեղանկարիչը:

ՎԱՅՐԱՍ ՕՐԲԵԼՅԱՆ

«Իմ հոգում՝ Կոմիտաս»

Սեպտեմբերի 26-ին լրացավ հայ կոմպոզիտորական դպրոցի հիմնադիր, բանահավաք, երաժշտագետ, երգահան մեծն Կոմիտասի 150-ամյա հոբելյանը: Կապանի մշակույթի կենտրոնում տեղի ունեցավ օրվա խորհրդին նվիրված միջոցառում, որ «Իմ հոգում՝ Կոմիտաս» խորագիրն էր կրում, դրանով ըստ ամենայնի եզրափակվեց «Քեզ համար, Կապան» բարեգործական ծրագիրը՝ մեկնարկված այս տարվա հունիսից:

Մշակույթի կենտրոնի ստեղծագործական կազմը ներկայացրեց գրական-երաժշտական համադրույթ, բեմահարթակին Կոմիտասի կյանքն էր, թե ինչպես ծնողազուրկ պատանին, հաղթահարելով աներեակայելի խոչընդոտներ, հայ երգը մաքրեց օտարամուտ ազդեցություններից՝ վերադարձնելով հարազատ ժողովրդին: Երգահանի կյանքի կարեւոր իրադարձու-

թյուններն արտացոլող ասմունքն ընդմիջվում էր կոմիտասյան անմահ երգերով:

Միջոցառման ավարտին հանդիսականը երկարատեւ ծափահարություններով վարձատրեց երգիչ-երգչուհիներին, երաժիշտ-կատարողներին եւ միջոցառման ստեղծագործական կազմին (նախածեռնության հեղինակ՝ Գեորգ Հարությունյան, սցենարը՝ Մարգարիտա Մանուկյանի, բեմադրությունը՝ Քրիստինե Սլոյանի, գեղարվեստական ղեկավար՝ Աստղիկ Գրիգորյան):

Համերգի ավարտին մշակույթի կենտրոնի տնօրեն Գեորգ Հարությունյանը ներկայերիս երախտագիտություն հայտնեց բարեգործական ձեռնարկին ավանդ բերելու համար, նաեւ տեղեկացնելով, որ համահայկական փառատունին հավաքվել է ավելի քան 15 մլն 200 հազար դրամ, որ բացառապես կհատկացվի Կապան համայնքի համար շարժական բեմ ձեռք բերելու նպատակով:

ՎԱՅՐԱՍ ՕՐԲԵԼՅԱՆ

Գիրք հանքաշխարհի եւ նրա մարդկանց մասին

Կապանի մշակույթի կենտրոնի փոքր դահլիճում տեղի ունեցավ Նինա Դանիելյանի «Ես եւ իմ հանքաշխարհը. Լենինաքեր» գրքի շնորհանդեսը: Ինչպես նշված է նախաբանում, գիրքը կառուցված է կենդանի մարդկանց հիշողություններով՝ համեմատված տներում մասունքի պես սուրբ-սուրբ պահված ընտանեկան եւ աշխատանքային, արդեն խունացած լուսանկարներով: Նաեւ հեղինակի խոստովանանքը կա. «Ընթերցող՝ եթե գիրքս կհուզի քեզ այնքան, որ ես եմ հուզվել այն գրելու եւ տպագրելու ընթացքում, ուրեմն հասել եմ նպատակիս եւ մոռացումից փրկել երբեմնի աշխույժ եռուզեռով ապրող իմ բանվորական ավանի՝ Լենինաքերի պատմությունը»:



գրքում լուսանկարների առատությունը, որոնց մի մասը հայրենագիտական արժեք ունի:

Էկրանից հնչեցին մոտ ու հարազատ մարդկանց տեսաուղերձերը. նրանցում երախտագիտության խոսքեր կային հեղինակի հասցեին, ով վերականգնանացրել է իր ծննդավայրի անմոռաց անձանց եւ իրադարձու-

թյունները:

Վերջում գրքի հեղինակ Նինա Դանիելյանը մանրամասներ ներկայացրեց, թե ինչպես է ստեղծել «Ես եւ իմ հանքաշխարհը», երախտագիտություն հայտնեց բոլոր նրանց, ովքեր նպաստել են հայրենի եզերքի պատմությունն արտացոլող գրքի լույս աշխարհ գալուն:

Այս տարի լրանում է հանքաշխարհի սրտի՝ Լենինաքերի 95 տարին, որի հիմքը դրվել է Հայաստանում խորհրդային կարգեր հաստատելուց 4 տարի անց՝ 1924 թվականին: Միջոցառմանը նաեւ հայտնեցին, որ այսուհետ ամեն տարի օգոստոսի 23-ը կնշվի որպես Լենինաքերի (Լենինոպոլ) օր:

ՎԱՅՐԱՍ ՕՐԲԵԼՅԱՆ

ՎԱՅՐԱՍ ՕՐԻ ԹՅՈՒՆ

- 1. ՆՁՊ
- 2. Ֆիզիկա
- 3. Զինիա
- 4. Կենսաբանություն
- 5. Աշխարհագրություն
- 6. Զանապարհային երթեւեկության անվտանգության ապահովում
- 7. Հայոց լեզու եւ գրականություն

Տեղեկությունների համար զանգահարել 077-52-32-90 հեռախոսահամարով կամ այցելել Քաջարանի արհեստագործական պետական ուսումնարան ՊՈԱԿ, հասցե՝ ք. Քաջարան, Խանջյան 5:

Ցամաքային

«Սյունյաց երկիր» թերթի խմբագրակազմը ցավակցում է ՀԱՊՀ Կապանի մասնաճյուղի տնօրեն Արթուր Կոստանյանին՝ սիրելի տատիկի՝ Ժենյա Կոստանյանի մահվան կապակցությամբ:

Սյունյաց երկիր

ՀԻՄՆԱԳԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱՎԿԻՉ
«ԱՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»
 ՍԱՀՄԱՆԱԲՈՎ ԳՊՍԱՍԽԱՄԱՏՎՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Գլխավոր խմբագիր՝
ՍԱՍՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

www.syuniacyerkir.am

Հասցե՝ Կապան, Շահումյան 20/32:
 Հեռ.՝ (0285) 5 25 63,
 (091) 45 90 47,
 (077) 45 90 47:

Էլ. փոստ՝ syuniacyerkir@mail.ru
 Էլ. կայք՝ www.syuniacyerkir.am

Մշակման տակ տպագրվում են գովազդային նյութեր:

www.facebook.com/SyuniacyerkirNewspaper/

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի):

Հղումը «Սյունյաց երկրին» պարտադիր է:

Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:
 Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
 Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:

«ԳՈՎԱԶԳ - ԾԱՆՈՒՑՈՒՄ»
 բաժնուն տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

Ծավալ՝ 2 տպագրական մամուլ:

Տպաքանակ՝ 1200, գինը՝ 100 դրամ:

Ստորագրված է տպագրության 03.10.2019թ.:

QR ԿՈՂ